



**ՀԱՉԱՐԱՄՅԱԿԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ
ՀԻՄՆԱԳՐԱՍ-ՀԱՅԱՍՏԱՆ**

Մամուլ հաղորդագրություն

19 դեկտեմբերի, 2008

Կնքվեց ոռոգման վեց մայր ջրանցքների վերականգնման պայմանագիր

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ – Հայաստան ՊՈԱԿ-ի և «ՄԱԳ» (Ֆրանսիա) և «ՇՄՇ-23» (Հայաստան) կոնսորցիումի միջև 5.7 միլիոն ԱՄՆ դոլարի պայմանագիր կնքվեց, համաձայն որի կոնսորցիումը Ռոտզվոդ գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում պետք է իրականացնի վեց մայր ջրանցքների առաջին փաթեթով նախատեսված շինարարական աշխատանքները: Պայմանագիրը ստորագրվեց 2008թ-ի դեկտեմբերի 16-ին ՀՄՀ-Հայաստանի գրասենյակում Գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանի և «ՄԱԳ» ընկերության ներկայացուցիչ Ֆրենսիս Մարկեզի կողմից:

Առաջին փաթեթի շինարարական աշխատանքները ներառում են Արզնի-Շամիրամ ջրանցքի 4.2 կմ առավել վթարային հատվածների բետոնե երեսպատում և վեց մայր ջրանցքների (Արզնի-Շամիրամ, Արմավիր, Արտաշատ, Ստորին Հրազդան, Շիրակ, Թալին) առավել վթարային հատվածների հիդրո-տեխնիկական կառուցվածքների վերականգնում:

Պայմանագիրը նաև նախատեսում է փորձնական ենթաբաղադրիչի իրականացում, որը թույլ կտա փորձարկել տորկրետային և այլ առաջատար տեխնոլոգիաների կիրառումը ջրանցքների շուրջ 200 մետր հատվածների վրա: Հաջող կիրառման դեպքում տորկրետային և այլ առաջատար տեխնոլոգիաները կկիրառվեն նաև հետագայում՝ ջրանցքների և հիդրո-տեխնիկական կառուցվածքների վերականգնման շինարարական աշխատանքների ժամանակ:

Աշխատանքները կներառեն Արմավիրի, Արագածոտնի, Արարատի, Կոտայքի և Շիրակի մարզերը և կմեկնարկեն 2009-ի հունվարից:

Այս պայմանագրի և ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք այցելել՝

www.mca.am

###

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար: